ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀՇՁԲ-19/10

Գ. Հայանիստ «09» Հուլիսի 2019թ.

«Մելիորացիա» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ֆահրադյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Լաճիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մեխանիզմների սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է մինչև **9 600 000 (ինը միլիոն վեց հարյուր հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Մելիորացիա» ՓԲԸ	**«Լաճ Գրուպ» ՍՊԸ**
ՀՀ Արարատի մարզ, գ. Հայանիստ	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Աբովյան 256
«Արդշինբանկ» ՓԲԸ, Աղասյան մ/ճ	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2474602666500000	Հ/Հ 220483331819000
ՀՎՀՀ 04214258	ՀՎՀՀ 05525557
Տնօրեն՝ Ա. ՓԱՀՐԱԴՅԱՆ	Տնօրեն՝ Տ. ԼԱՃԻԿՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«09» հուլիսի 2019 թ. կնքված
***ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀՇՁԲ-19/10** ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	50111480	1. Կարդալ ստորև 2.Համապատասխան **Հավելված 1.1-ի	դրամ	4 800 000	1	ՀՀ Արարատի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Շիրակի Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում՝ մեխանիզմների շահագործման վայրեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.12.2019
2	50111480	1. Կարդալ ստորև 2.Համապատասխան **Հավելված 1.2-ի	դրամ	2 000 000	1	ՀՀ Արարատի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Շիրակի Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում՝ մեխանիզմների շահագործման վայրեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.12.2019
3	50111480	1. Կարդալ ստորև 2.Համապատասխան **Հավելված 1.3-ի	դրամ	2 000 000	1	ՀՀ Արարատի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Շիրակի Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում՝ մեխանիզմների շահագործման վայրեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.12.2019
4	50111480	1. Կարդալ ստորև 2.Համապատասխան **Հավելված 1.4-ի	դրամ	800 000	1	ՀՀ Արարատի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Շիրակի Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում՝ մեխանիզմների շահագործման վայրեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.12.2019

Տեխնիկական բնութագիր

Մեխանիզմների տեխնիկական սպասարկման կայաններից պահանջվող տեխնիկական և կազմակերպչական պահանջներ

Իրականացվող նորոգումների և տեխսպասարկումների ընթացակարգի համառոտ նկարագիրը

1. Մեխանիզմների անհրաժեշտ նորոգման և տեխսպասարկման համար կատարողը պարտավոր է պատվիրատուի հետ նշված ժամկետում և պահանջով ընդունել մեխանիզմը և անմիջապես իրականացնել անհրաժեշտ քանդման, սպասարկման, զննման և գնահատման աշխատանքներ
2. Յուրաքանչյուր մեխանիզմի անհրաժեշտ սպասարկման և նորոգման համար պատվիրատուի պահանջով կատարողի կողմից կազմվում, կնքվում և պատվիրատուին է ներկայացնում նախնական զննման և գնահատման ակտ
3. Ծառայությունները պետք է մատուցվեն մեխանիզմների տեխնիկական կայանում կամ մեխանիզմների աշխատավայրում գրանցվելու օրվանից վերանորոգման անհրաժեշտ ժամկետում և ժամանակին
4. Վերանորոգման աշխատանքները ավարտելուց հետո կազմել երկկողմանի ընդունման հանձնման-արձանագրություն պատվիրատուի և կատարողի կողմից
5. Մեխանիզմների սպասարկման ծառայությունների համար երաշխիքային ժամկետ պետք է լինի 6 ամիս

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Մելիորացիա» ՓԲԸ	**«Լաճ Գրուպ» ՍՊԸ**
ՀՀ Արարատի մարզ, գ. Հայանիստ	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Աբովյան 256
«Արդշինբանկ» ՓԲԸ, Աղասյան մ/ճ	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2474602666500000	Հ/Հ 220483331819000
ՀՎՀՀ 04214258	ՀՎՀՀ 05525557
Տնօրեն՝ Ա. ՓԱՀՐԱԴՅԱՆ	Տնօրեն՝ Տ. ԼԱՃԻԿՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1□1

«09» հուլիսի 2019 թ. կնքված

ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀՄՁԲ-19/10 ծածկագրով պայմանագրի

Մեխանիզմների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերում

NN	Վերանորոգման ծառայություններ	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը
Չափաբաժին 1 /Դրագլայն տիպի էքսկավատորների տեխնիկական սպասարկում/				
1.	Կոշիկի փոխարինում	դրամ	1	5000
2.	Կոշիկի մատի փոխարինում	դրամ	1	5000
3.	Գալյա շղթայի փոխարինում	դրամ	1	8000
4.	Շերեփի շղթայի փոխարինում	դրամ	1	8000
5.	Շերեփի մատի փոխարինում	դրամ	1	3000
6.	Բարձարացնող ճոպանի փոխարինում	դրամ	1	5000
7.	Ձգող Ճոպանի /потяжной/ փոխարինում	դրամ	1	5000
8.	Նետի ճոպանի փոխարինում	դրամ	1	8000
9.	Կարգավորող ճոպանի փոխարինում	դրամ	1	5000
10.	Ուղղորդող հորիզոնական անիվի փոխարինում	դրամ	1	15000
11.	Ուղղորդող ուղղահայաց անիվի փոխարինում	դրամ	1	15000
12.	Նետի անիվի / ролик стрелы/ փոխարինում	դրամ	1	20000
13.	Փոխարկիչի /тумблер/ փոխարինում	դրամ	1	8000
14.	Առանցքակալ 222 փոխարինում	դրամ	1	70000
15.	Առանցքակալ ռևերս 3618 փոխարինում	դրամ	1	70000
16.	Ռևերսի լիսեռի փոխարինում	դրամ	1	70000
17.	Արգելակման կիսալուսնաձև կոճղակների փոխարինում	դրամ	1	10000
18.	Արգելակման թմբուկաձև կոճղակների փոխարինում	դրամ	1	12000
19.	Անձայն շղթայի փոխարինում	դրամ	1	10000
20.	Գալյա շղթա՝ փոքր նետի բարձրացնող, փոխարինում	դրամ	1	10000
21.	Անձայն շղթայի հանգստացնողի փոխարինում	դրամ	1	12000
22.	Ատամնանիվ /12 ատամ/ փոխարինում	դրամ	1	20000
23.	Խցուկ 160 x110, 120 փոխարինում	դրամ	1	10000
24.	Վառելիքի պոմպ S-130 փոխարինում	դրամ	1	15000
25.	Ջրի պոմպ փոխարինում	դրամ	1	20000
26.	Բոցամուղի /форсунка/ փոխարինում	դրամ	1	10000
27.	Ջրի ռադիատորի փոխարինում	դրամ	1	25000
28.	Հովացման համակարգի ռետինե խողովակի փոխարինում	դրամ	1	5000

29.	Թողարկման շարժիչի փոխարինում	դրամ	1	40000
30.	Ցենտրիֆուգի փոխարինում	դրամ	1	5000
31.	Դիզվառելիքի ֆիլտրի փոխարինում	դրամ	1	5000
32.	Կոմպրեսորի փոխարինում	դրամ	1	20000
33.	Կոշիկի կարգավորող հեղյուսի փոխարինում	դրամ	1	30000
34.	Կոմպրեսորի փոկի փոխարինում	դրամ	1	3000
35.	Անիվի /ролик/ փոխարինում	դրամ	1	30000
36.	Օդի ճնշման ցուցիչի փոխարինում	դրամ	1	3000
37.	Յուղի ճնշման ցուցիչի փոխարինում	դրամ	1	3000
38.	Օդի և յուղի բարձր ճնշման խողովակի փոխարինում	դրամ	1	5000
39.	Օդի ճնշման մղակի փոխարինում	դրամ	1	5000
40.	Թողարկման շարժիի կարբյուրատորի փոխարինում	դրամ	1	5000
41.	Կայծամոմի փոխարինում	դրամ	1	2000
42.	Մագնիտոյի փոխարինում	դրամ	1	5000
43.	Առանցքակալների փոխարինում	դրամ	1	10000
44.	Աստղանիվների փոխարինում	դրամ	1	20000
45.	Լիսեռների փոխարինում	դրամ	1	20000
46.	Ռևերսի փոխարինում	դրամ	1	80000
47.	Դիաֆրագմայի փոխարինում	դրամ	1	5000
48.	Նետի զոդում	դրամ	1	20000
49.	Կմախքի զոդում	դրամ	1	30000
50.	Շերեփի զոդում	դրամ	1	50000
51.	Խցիկի զոդում	դրամ	1	20000
52.	Այլ հանգույցների զոդում	դրամ	1	50000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Մելիորացիա» ՓԲԸ
ՀՀ Արարատի մարզ, գ. Հայանիստ
«Արդշինբանկ» ՓԲԸ, Աղասյան մ/ճ
Հ/Հ 2474602666500000
ՀՎՀՀ 04214258
Տնօրեն՝ Ա. ՖԱՀՐԱԴՅԱՆ

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Լաճ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Աբովյան 256
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 220483331819000
ՀՎՀՀ 05525557
Տնօրեն՝ Տ. ԼԱՃԻԿՅԱՆ

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1□2
«09» հուլիսի 2019 թ. կնքված
ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀԾՁԲ-19/10 *ծածկագրով պայմանագրի*

Մեխանիզմների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերում

NN	Վերանորոգման ծառայություններ	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը
Չափաբաժին 2 Բուլդոզեր S 170 /Բուլդոզեր S 130				
1.	Պոմպ -ЭНШ-100ի փոխարինում	դրամ	1	10000
2.	N 27 խողովակի փոխարինում	դրամ	1	5000
3.	N 32 խողովակի փոխարինում	դրամ	1	5000
4.	Թմբուկի վերանորոգում	դրամ	1	50000
5.	Թմբուկի փոխարինում	դրամ	1	50000
6.	Արգելակող ժապավենի փոխարինում	դրամ	1	20000
7.	Տուրբոկոմպենսատորի փոխարինում	դրամ	1	15000
8.	Թողարկման շարժիչի կամ պահեստամասերի փոխարինում	դրամ	1	15000
9.	Փոկի փոխարինում	դրամ	1	5000
10.	Կոնուսի բաք կամ պահեստամասերի փոխարինում	դրամ	1	20000
11.	Ջրի պոմպի փոխարինում	դրամ	1	10000
12.	Կոշիկի մանեկի և հեղյուսի փոխարինում	դրամ	1	5000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Մելիորացիա» ՓԲԸ
ՀՀ Արարատի մարզ, գ. Հայանիստ
«Արդշինբանկ» ՓԲԸ, Աղասյան մ/ճ
Հ/Հ 24746026665000000
ՀՎՀՀ 04214258
Տնօրեն՝ Ա. ՓԱՀՈՍՅԱՆ

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Լաճ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Աբովյան 256
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 220483331819000
ՀՎՀՀ 05525557
Տնօրեն՝ Տ. ԼԱՃԻԿՅԱՆ

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1□3
«09» հուլիսի 2019 թ. կնքված
ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀԾՁԲ-19/10 ծածկագրով պայմանագրի

Մեխանիզմների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերում				
NN	Վերանորոգման ծառայություններ	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը
Չափաբաժին 3 /Կամազ 5511 /երկու հատ/				
1	Անվադողի վերանորոգում	դրամ	1	1000
2	Անվադողի փոխարինում նորով	դրամ	1	1500
3	Արգելակման կոճղակների փոխարինում նորով	դրամ	1	10000
4	Կիսասռնու փոխարինում նորով	դրամ	1	5000
5	Խցուկների փոխարինում	դրամ	1	5000
6	Կոմպենսատորի փոխարինում	դրամ	1	10000
7	Ջրի պոմպ վերանորոգում	դրամ	1	15000
8	Շարժիչի գլխիկի վերանորոգում	դրամ	1	5000
9	Շարժիչի գլխիկի փոխարինում	դրամ	1	5000
10	Փոկի փոխարինում	դրամ	1	1000
11	N 22 խողովակի փոխարինում	դրամ	1	1500
12	Խաչուկների փոխարինում	դրամ	1	5000
13	Մեծ և փոքր դիաֆրագմաների փոխարինում	դրամ	1	10000
14	Արգելակման խողովակների փոխարինում	դրամ	1	5000
15	Փոխանցման տուփի և կամրջակի պահեստամասերի փոխարինում	դրամ	1	50000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Մելիորացիա» ՓԲԸ
ՀՀ Արարատի մարզ, գ. Հայանիստ
«Արդշինբանկ» ՓԲԸ, Աղասյան մ/ճ
Հ/Հ 24746026665000000
ՀՎՀՀ 04214258
Տնօրեն՝ Ա. ՖԱՀՐԱԴՅԱՆ

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Լաճ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Աբովյան 256
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 220483331819000
ՀՎՀՀ 05525557
Տնօրեն՝ Տ. ԼԱՃԻԿՅԱՆ

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1□4
«09» հուլիսի 2019 թ. կնքված
ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀԾՁԲ-19/10 *ծածկագրով պայմանագրի*

Մեխանիզմների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերում				
NN	**Վերանորոգման ծառայություններ**	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը
Չափաբաժին 4 Բելառուս ԷՕ 2621				
1.	Շարժիչի վերանորոգում	դրամ	1	80000
2.	Առջևի և հետևի Շերեփների վերանորոգում	դրամ	1	25000
3.	Ջրի պոմպի փոկային համակարգի փոխարինում	դրամ	1	2000
4.	Հիդրավլիկի բաժանարարի փոխարինում	դրամ	1	5000
5.	Բարձր ճնշման խողովակների փոխարնում	դրամ	1	1500
6.	ՆՇ-10 փոխարինում	դրամ	1	5000
7.	ՆՇ-100 փոխարինում	դրամ	1	5000
8.	Շտոկի փոխարինում	դրամ	1	20000
9.	Շտոկի վերանորոգում	դրամ	1	25000
10.	Ղեկային համակարգի վերանորոգում	դրամ	1	2000
11.	Թողարկման շարժիչի փոխարինում	դրամ	1	5000
12.	Թողարկման շարժիչի վերանորոգում	դրամ	1	10000
13.	Հովացման համակարգի վերանորոգում և ռետինե խողովակների փոխարինում	դրամ	1	5000
14.	Զոդման աշխատանքներ	դրամ	1	15000
15.	Առջևի և հետևի պահող հենակների վերանորոգում	դրամ	1	10000
16.	Վառելիքի ճնշման պոմպի ևբոցամուղների վերանորոգում	դրամ	1	20000
17.	Անվադողերի փոխարինում	դրամ	1	2000
18.	Կարբյուրատորի վերանորոգում	դրամ	1	8000
19.	Կարբյուրատորի փոխարինում	դրամ	1	3000
20.	Կայծամոմերի փոխարինում	դրամ	1	1000
21.	Ռադիատորի մաքրում	դրամ	1	10000
22.	Ռադիատորի վերանորոգում	դրամ	1	15000
23.	Մագնիտոյի վերանորոգում	դրամ	1	6000
24.	Մագնիտոյի փոխարինում	դրամ	1	2000
25.	Խցուկների Վերանորոգում	դրամ	1	3000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Մելիորացիա» ՓԲԸ
ՀՀ Արարատի մարզ, գ. Հայանիստ
«Արդշինբանկ» ՓԲԸ, Աղասյան մ/ճ
Հ/Հ 2474602666500000
ՀՎՀՀ 04214258
Տնօրեն՝ Ա. ՖԱՀՐԱԴՅԱՆ

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Լաճ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Աբովյան 256
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 220483331819000
ՀՎՀՀ 05525557
Տնօրեն՝ Տ. ԼԱՃԻԿՅԱՆ

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«09» հուլիսի 2019 թ. կնքված
ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀԾՁԲ-19/10 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում						
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111480/1	Շինարարական տեխնիկայի սպասարկման ծառայություններ՝ Էքսկավատորների սպասարկում	720 000	1 680 000	2 400 000	3 120 000	4 080 000	4 560 000	4 800 000	4 800 000
2	50111480/2	Շինարարական տեխնիկայի սպասարկման ծառայություններ՝ Բուլդոզերների սպասարկում	300 000	300 000	1 000 000	1 300 000	1 700 000	1 900 000	2 000 000	2 000 000
3	50111480/3	Շինարարական տեխնիկայի սպասարկման ծառայություններ՝ Բեռնատարների սպասարկում	300 000	300 000	1 000 000	1 300 000	1 700 000	1 900 000	2 000 000	2 000 000
4	50111480/4	Շինարարական տեխնիկայի սպասարկման ծառայություններ՝ Տրակտորի սպասարկում	120 000	280 000	400 000	520 000	680 000	760 000	800 000	800 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Մելիորացիա» ՓԲԸ
ՀՀ Արարատի մարզ, գ. Հայանիստ
«Արդշինբանկ» ՓԲԸ, Արասյան մ/ճ
Հ/Հ 2474602666500000
ՀՎՀՀ 04214258
Տնօրեն՝ Ա. ՖԱՀՐԱԴՅԱՆ

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Լաճ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Աբովյան 256
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 220483331819000
ՀՎՀՀ 05525557
Տնօրեն՝ Տ. ԼԱՃԻԿՅԱՆ

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«09» հուլիսի 2019 թ. կնքված
ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀԾՁԲ-19/10 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«__09__» հուլիսի 2019 թ. կնքված
ՀՀԷԵԲՊՆ-Մ-ԳՀԾՁԲ-19/10 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն